

50. ՀԱՐՈՒՆ-ՂԱՐՈՒՆԵՆ ՆԱՂԼԸ

Հարուն-Ղարունը շատ հարուստ մարդ ա ինում։ Նրա գովլիքն էնքան շատ ա ինում, վրեր կարում չի, թա հըվրքելավ պըրծըցնե։ Մին օր Հարուն-Ղարունը Քրիստոսեն զալանք ա անում, ասում ա.—Քյինա՜ ըստուծըեն կոշտը, ասըն էն գովլիքը վրեր տուվալ ըս Հարուն-Ղարունըեն, մխըրն պըկըսցնե, ծրեռքեն կըրակ ա ինգյալ, կարում չի հըվրքելավ կըլխըցնե։

Քրիստոսը քյինում ա ըստուծեն կոշտը, Հարուն-Ղարունեն ասածն ասում։ Ասավաժ էլ Քրիստոսըեն ասում ա.—Քյինա՜ Հարուն-Ղարունեն ասըն օրաս հետը պոռզ հաց չի թխե, թոզ միշտ լավաշ թխե։ Քրիստոսը կյամ ա ըստուծեն փասապարքը Հարուն-Ղարունեն ասում։

Տրանա հետը Հարուն-Ղարունեն ըսկսում ա լավաշ թխելը։ Հարուն-Ղարունը տրեսնում ա, վրեր խոխրեքյը լավաշն ուտելիս կուտրատվում ա վրեններրներեն տակրեն վրեր տրեռնում, խոխոցը հետե ամեքյա մին ըռըշկետան ա կարել տամ, ամմրեն հաց ուտելիս էտ ըռըշկրատաները խուխոցը ըռըշներավը կապում, վրեր հացրեն կուտուրատանքը տապրեն վրեր չի տրեռնա։ Հարուն-Ղարունը տրեսնում ա, վրեր ուրան գովլիքը հիշքան իլա՜ ա, էրկու էնքան իվիլանում ա։ Քրիստոսեն մին էլ ա ասում, թա գա ես ըստուծեն զալանք-պըղատանք ըմ ըրալ, վրեր գովլիքես պատատ յոր օնրե, պերալ ա հիշքան իլա՜ ա, նրա էրկու մշանք իվիլցըրալ. աստուծեն ասըն՝ հիշքան գովլիք օնրեմ, հալալ ախպոր մնան մալան կես անրե, վրեշ հըվրքելին ա հար ինում, վրեշ էլ խըրշիլավ ա պըրծնում։

Քրիստոսը մին էլ ա քյինամ ըստուծքեն կոշտը, Հարուն-Ղարունեն ասածը նադլ անում։ Ասվածն էլ ասում ա.—Ես ասալ եմ Հարուն-Ղարունը հացը լավաշ թխե, հանցու պըտըրոնեն տափքեն վըր տըհնա, ուրեն ըռուզին կըտըրցնըմ, պա տըհանում չը՞ս, վըր ամմըեն մին խուխու մին-մին ըռըշկեատան ա կարել տուվալ, դուշըրներան կապալ, հացըեն պատառը տափը չի ինգյում, ես հունց կըկա՞ըմ ուրենց ըռուզին ետ քաշիմ։